# ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀՌՑ-ԳՀԱՇՁԲ-21/19
## «ՀՀՌՑ» ՓԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԷԼԵԿՏՐԱՀԱՂՈՐԴՄԱՆ ՕԴԱՅԻՆ ԳԾԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

ք. Երևան 11 10 2021թ.

«Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲ ընկերությունն, ի դեմս գլխավոր տնօրեն Մուշեղ Միլիտոնյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ /Պատվիրատու/, մի կողմից, և «Նուռտել» ՍՊ ընկերությունն, ի դեմս տնօրեն Օհան Ղևոնդյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ /Կապալառու/, մյուս կողմից, հետագայում համատեղ հիշատակմամբ՝ /կողմեր/, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

### 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված ***«ՀՀՌՑ» ՓԲ ընկերության Անտառամեջի և Տանձավերի հեռուստակայանները սնող 10կՎ էլեկտրահաղորդման օդային գծերի վերանորոգման*** աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

### 2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

### 3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝**

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի Հավելված 1-ով նախատեսված ժամկետի խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու Պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է Հավելված 1-ով կետում նախատեսված ժամկետը,

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը` պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

**3.2. Պատվիրատուն պարտավոր է`**

3.2.1 Աշխատանքը կատարելիս` աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում` այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի Հավելված 1-ով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

**3.3. Կապալառուն իրավունք ունի`**

3.3.1 Պայմանագրի Հավելված 1-ով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված` վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

**3.4. Կապալառուն պարտավոր է`**

3.4.1 Աշխատանքը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով` նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի Հավելված 1-ով նշված ժամկետը խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում` իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

**4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ**

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով` նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված` աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)` նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ` լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 20 /քսան/ աշխատանքային օրվա օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5Աշխատանքի արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ` թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող` կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները`

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի` Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ` ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը` Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը`

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը` Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում` վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

## 5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **5 000 000 (հինգ միլիոն)** ՀՀ դրամ: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝

1-ին չափաբաժին՝ **2 550 000** (երկու միլիոն հինգ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ:

2-րդ չափաբաժին՝ **2 450 000** (երկու միլիոն չորս հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքը պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ` դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա` պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի հավելված 1-ով նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ` կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք` պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ` վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի,

կա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը` այդ մասին ախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

**8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ**

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած` կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած` հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի փոխադարձ համաձայնությամբ` համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը` Կապալառուի առաջարկության առկայության դեպքում` պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի` երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները` ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ` բացառությամբ` Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի`

պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ [illegible]
փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի
Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար
անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է 12 /տասներկու/ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| | |
|---|---|
| **ՊԱՏՎԻՐԱՏՈՒ** | **ԿԱՊԱԼԱՌՈՒ** |
| ՀՀ, ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95 | ՀՀ, ք. Երևան, Մոսկովյան 31 |
| «Ամերիաբանկ» ՓԲԸ | ,ՎՏԲ Հայաստան Բանկէ ՓԲԸ |
| Հ/Հ՝ 1570027609970100 | Հ/Հ՝ 16043201908300 |
| ՀՎՀՀ 01501898 | ՀՎՀՀ 02585505 |
| ---------------------------------------- | ---------------------------------------- |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |

*Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:*

*Հավելված թիվ 1*
*11 10 2021թ. կնքված*
*ՀՀՌՑ-ԳՀԱՇՁԲ-21/19 ծածկագրով պայմանագրի*

# 1. ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՅԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ՀՀ դրամ

| չ/հ | Աշխատանքի<br>գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | Անվանումը, Տեխնիկական բնութագիրը* | չափման միավորը | միավորի գինը հազ. ՀՀ դրամ | ընդհանուր գինը հազ. ՀՀ դրամ | ընդհա-նուր քանա-կը | կատարման<br>հասցեն | ժամկետը<br>սկիզբ | ավարտ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 45231136 | «ՀՀՌՑ» ՓԲԸ Անտառամեջի հեռուստակայանը սնող 10 կՎ էլեկտրահաղորդման օդային գծի վերանորոգում | դրամ | 2 550 000 | 2 550 000 | 1 | ՀՀ, Գեղարքունիքի մարզի Անտառամեջի համայնք | Պայմանա-գրի կնքման օրվանից | 20 օր |
| 2 | 45231136 | «ՀՀՌՑ» ՓԲԸ Տանձավերի հեռուստակայանը սնող 10 կՎ էլեկտրահաղորդման օդային գծի վերանորոգում | դրամ | 2 450 000 | 2 450 000 | 1 | ՀՀ, Սյունիքի մարզ, Տանձավեր գյուղ | Պայմանա-գրի կնքման օրվանից | 20 օր |

**Չափաբաժին 1**
**«ՀՀՌՑ» ՓԲԸ Անտառամեջի հեռուստակայանը սնող 10 կՎ էլեկտրահաղորդման օդային գծի վերանորոգման աշխատանքների ծեռքբերում**

**Ծավալաթերթ-նախահաշիվ**

| Հ/Հ | Աշխատանքների տեսակները , անվանումը | Չ/Մ | Քանակ | Միավ.գինը հազ. դրամ | Ընդհանուր գինը /կշիռ/ տոկոսներով հազ. դրամ |
|---|---|---|---|---|---|
| | 1.АК10-3ДБ տիպի 2 հատ հենասյան տեղադրում /Монтаж 2-х опор типа АК10-3ДБ | | | | |
| 1 | Կանգնակ С-25, d=180մմ, L=8, | հատ | 4 | 120 | 480,0 |
| 2 | Ե/բ դրոց ПТ-2,2-4,25 | հատ | 4 | 85 | 340,0 |
| 3 | Մետաղական ամրալար d=4մմ | մ | 216 | 1,05 | 226,8 |
| 4 | Տափօղակ-անցք d=22մմ | հատ | 64 | 0,7 | 44,8 |
| 5 | Հեղույս-М20, L=500մմ (1հատ -0,194կգ) | հատ | 2 | 0,7 | 1,4 |
| 6 | Հեղույս-М20, L=300մմ (1հատ -0,148կգ) | հատ | 14 | 0,7 | 9,8 |
| 7 | Պնդօղակ-2М20 (1հատ -0,06 կգ) | հատ | 32 | 0,7 | 22,4 |
| 8 | Կեռ КВ-22 | հատ | 6 | 2,8 | 16,8 |
| 9 | Մեկուսիչ ШС-10 | հատ | 6 | 11,5 | 69,0 |
| 10 | Գլխադիր К-6 / | հատ | 6 | 4 | 24,0 |
| | Ընդամենը | | | | 1 235,0 |
| | Ընդամենը % | | | | 48,43% |
| | 2. Գծային բաժանիչի տեղադրում 2հատ | | | | |
| 1 | Գծային բաժանիչ РЛНД-1-10 , ПРН3 տիպի շրժաբերով | կոմպլեկտ | 2 | 182 | 364,0 |
| 2 | Գծային բաժանիչի մետաղական տակդիր 50x50x5մմ անկյունակից (1մ -3,77կգ) | մ/м | 30 | 4,8 | 144,0 |
| 3 | Գծային բաժանիչի հողանցում շերտավոր պողպատից 40x4մմ | մ/м | 15 | 1,2 | 18,0 |
| | Ընդամենը | | | | 526,0 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | Ընդամենը % | | | | 20,63% |
| | 3. Հաղորդալարի մոնտաժում | | | | |
| 1 | Հաղորդալար AC-35/6,2 , 104մx3x1.05(5%) | մ/м | 327,6 | 0,7 | 229,32 |
| | Ընդամենը | | | | 229,32 |
| | Ընդամենը % | | | | 8,99% |
| | 4. Ապամոնտաժման աշխատանքներ /Демонтажные работы | | | | |
| 1 | Կանգնակ C-25, d=180մմ, L=8,5մ | հատ/шт | 3 | 10 | 30,0 |
| 2 | Ե/բ դրոց ПТ-2,2-4,25/ | հատ/шт | 3 | 5,5 | 16,5 |
| 3 | Հաղորդալար AC-35/6,2 , 104մ | մ/м | 327,6 | 0,2 | 65,52 |
| | Ընդամենը | | | | 112,02 |
| | Ընդամենը % | | | | 4,39% |
| | 5. Հողային աշխատանքներ /Земляные работы | | | | |
| 1 | AK10-3ДБ տիպի 2 հատ հենասյան տեղադրման համար փոսորակի փորում էքսկավատորով | մ3/куб.м | 5,3 | 7,2 | 38,16 |
| 2 | AK10-3ДБ տիպի 2 հատ հենասյան տեղադրման համար փոսորակի փորում ձեռքով/ | մ3/куб.м | 3,5 | 2,5 | 8,75 |
| 3 | Թվով 13 հատ հենասյուների ուղղման համար փոսորակի փորում էքսկավատորով / | մ3/куб.м | 8 | 7,2 | 57,60 |
| 4 | Թվով 13 հատ հենասյուների ուղղման համար փոսորակի փորում ձեռքով | մ3/куб.м | 2,125 | 3 | 6,375 |
| 5 | Գրունտի ետլիցք փոսորակների մեջ ձեռքով / | մ3/куб.м | 18,925 | 1 | 18,925 |
| 6 | Գրունտի մշակում ձեռքով 5 կարգ գրունտներում,հողանցման համար | մ3/куб.м | 2,25 | 18 | 40,5 |
| 7 | Գրունտի ետլիցք ձեռքով խրամուղում | մ3/куб.м | 2,25 | 1 | 2,25 |
| | Ընդամենը | | | | 172,56 |
| | Ընդամենը % | | | | 6,77% |
| | 6. Մոնտաժային աշխատանքներ | | | | |
| 1 | Թիվ 13 հենասյան կեռի ուղղում/ | հատ/шт | 1 | 1,5 | 1,5 |
| | Ընդամենը | | | | 1,5 |
| | Ընդամենը % | | | | 0,06% |
| | 6. Գոյություն ունեցող ԼՏԵ-ի բարեկարգման աշխատանքներ/ Работы по благоустройству существующей КТП | | | | |
| 1 | Տարածքի խճապատում հաստ.15սմ | մ2 /кв.м | 16 | 7,5 | 120,0 |
| 2 | ԼՏԵ-ի մաքրում ժանգից և ներկում | մ2 /кв.м | 5 | 0,88 | 4,4 |
| 3 | ԼՏԵ-ի ցանկապատի ներկում | մ2 /кв.м | 48 | 0,4 | 19,2 |
| | Ընդամենը | | | | 143,6 |
| | Ընդամենը % | | | | 5,63% |
| | 7.13 հատ հենասյան ուղղում | | | | |
| 1 | 13 հատ հենասյան ուղղում | հատ /шт | 13 | 10 | 130,0 |
| | Ընդամենը | | | | 130,0 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | Ընդամենը % | | | | 5,10% |
| | Ընդամենը | | | | 2 550,0 |
| | ԱԱՀ 20% | | | | 0 |
| | Ընդամենը | | | | 2 550,0 |

Չափաբաժին 2

«ՀՀՌՑ» ՓԲԸ Տանձավերի հեռուստակայանը սնող 10 կՎ էլեկտրահաղորդման օդային գծի վերանորոգման աշխատանքների ծեռքբերում

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

| Հ/Հ | Աշխատանքների և ծախսերի անվանումը | չափի միավոր | քանակ | միավոր ծախս հազ.դրամ | ընդհանուրը հազ. դր. |
|---|---|---|---|---|---|
| | Հենարանների մոնտաժ | | | | |
| 1 | Փայտյա հենարանների տեղադրում ե/բ կցուրդների վրա АК10-4ДБ ծայրային,խարսխային /ներառյալ հողային աշխատանքները/ | հենարան | 1 | 585 | 585,0 |
| 2 | Փայտյա հենարանների տեղադրում ե/բ կցուրդների վրա АК10-4ДБ ծայրային,խարսխային /ներառյալ հողային աշխատանքները/ | հենարան | 1 | 585 | 585,0 |
| 3 | Պարզունակի տեղադրում Р1-ж, առանց հողային աշխատանքների | հատ | 8 | 5 | 40,0 |
| | Ընդամենը հենարանների մոնտաժ | | | | 1 210,0 |
| | Ընդամենը տոկոսներով արտահայտված | | | | 49,39% |
| | Բաժանիչ հենարանների վրա | | | | |
| 4 | Բաժանիչ РЛНД.1-10/400У1 տեղադրում փայտե հենարանի վրա | հատ | 2 | 182 | 364,0 |
| 5 | Հեծան հենարանի վրա | հատ | 4 | 50 | 200,0 |
| 6 | Լրացուցիչ նյութեր АДР-1տիպի սարքվածքի տեղադրում АК10-4ДБ հենարանի վրա | հատ | 2 | 55 | 110,0 |
| 7 | Ծառագայթային հողանցման իրականացում ճառագայթի երկարությունը 10 մ, հաղորդաթիթեղի տեղադրումը տրակտորով (ներառյալ հողային աշխատանքներ) | 100գծմ | 0,1 | 500 | 50,0 |
| | Ընդամենը բաժանիչ հենարանների վրա | | | | 724,0 |
| | Ընդամենը տոկոսներով արտահայտված | | | | 29,55% |
| | Հաղորդալարի մոնտաժ | | | | |
| 8 | Հաղորդալարերի կախում երբ հենարանների քանակը 1 կմ ԲԳ մինչև 16, չբնակեցված տեղանք, АС 35/6,2 | կմ 3լար | 0,03 | 2400 | 72,0 |
| 9 | Հաղորդալարերի ապամոնտաժ երբ հենարանների քանակը 1 կմ ԲԳ մինճև 16, չբնակեցված տեղանք, АС 35/6,2 /օգտագործվում է տեղում/ | կմ 3լար | 0,06 | 250 | 15,0 |
| 10 | Հաղորդալարերի կախում երբ հենարանների քանակը 1 կմ ԲԳ մինճև 16, չբնակեցված տեղանք, АС 35/6,2 /օգտագործվում է ապամոնտաժածը/ | կմ 3լար | 0,06 | 900 | 54,0 |
| 11 | 10կՎ ՕԳ-ից 10կՎ ՕԳ-ի ճյուղավորում, փայտե հենարանի վրա (АС 35/6.2) | հատ | 1 | 10 | 10,0 |
| 12 | Ծառերի էտում | 10 հատ | 2 | 4,5 | 9,0 |
| | Ընդամենը հաղորդալարի մոնտաժ | | | | 160,0 |
| | Ընդամենը տոկոսներով արտահայտված | | | | 6,53% |
| | Մետաղական ցանկապատ | | | | |
| 13 | Պանելներից ցանցավոր ցանկապատի տեղադրում 12.0 գծ.մ (h=1.5մ) | քմ | 18 | 16,5 | 297,0 |
| 14 | Ցանցավոր դռնակի տեղադրում | հատ | 1 | 29 | 29,0 |
| 15 | Մետաղական տարրերի ներկում յուղային ներկով, զանգված մինչև 5տ | տ | 0,06 | 70 | 4,2 |
| 16 | Փոսրակի քանդում ձեռքով 4-րդ կարգի գրունտում, մինչև 2մ խորությամբ | 100խմ | 0,039 | 200 | 7,8 |
| 17 | Քանդած գրունտի ետ լիցք ձեռքով | 100խմ | 0,036 | 100 | 3,6 |
| 18 | Բետոնի նախապատրաստական շերտ В 15 դասի | խմ | 0,32 | 37,97 | 12,15 |
| 19 | Գրունտի հարթեցում ձեռքով | 100քմ | 0,03 | 75 | 2,25 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | **Ընդամենը մետաղական ցանկապատ** | | | | **356,0** |
| | **Ընդամենը տոկոսներով արտահայտված** | | | | **14,53%** |
| | **Ապամոնտաժային աշխատանքներ** | | | | |
| 20 | Փայտյա հենարանների ապամոնտաժ միակտոր կանգնակներից П1Д | հենարան | 1 | 0 | 0 |
| 21 | Փայտյա հենարանների ապամոնտաժ փատյա կցուրդների վրա АК10-3ДД, | հենարան | 1 | 0 | 0 |
| 22 | Բաժանիչ РЛНД.1-10/400У1 ապամոնտաժ | հատ | 1 | 0 | 0 |
| | **Ընդամենը ապամոնտաժային աշխատանքներ** | | | | **0** |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | | | | **2 450,0** |
| | **ԱԱՀ 20%** | | | | **0** |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | | | | **2 450,0** |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ, ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ` 1570027609970100
ՀՎՀՀ 01501898

----------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

ՀՀ, ք. Երևան, Մոսկովյան 31
,ՎՏԲ Հայաստան Բանկե ՓԲԸ
Հ/Հ` 16043201908300
ՀՎՀՀ 02585505

----------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
11.10 2021թ. կնքված
ՀՀՌՑ-ԳՀԱՇՁԲ-21/19 ծածկագրով պայմանագրի

## Վճարման ժամանակացույց*

| Աշխատանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ.-ին՝ ըստ ամիսների, այդ թվում՝ ՀՀ դրամ | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 45231136 | «ՀՀՌՑ» ՓԲԸ **Անտառամեջի** հեռուստակայանը սնող 10 կՎ էլեկտրահաղորդման օդային գծի վերանորոգում | - | - | - | - | - | - | - | - | - | 2 550 000 | 2 550 000 | 2 550 000 | 2 550 000 |
| 2 | 45231136 | «ՀՀՌՑ» ՓԲԸ **Տանձավերի** հեռուստակայանը սնող 10 կՎ էլեկտրահաղորդման օդային գծի վերանորոգում | - | - | - | - | - | - | - | - | - | 2 450 000 | 2 450 000 | 2 450 000 | 2 450 000 |

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ, ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 1570027609970100
ՀՎՀՀ 01501898

-----------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

ՀՀ, ք. Երևան, Մոսկովյան 31
,ՎՏԲ Հայաստան Բանկ ՓԲԸ
Հ/Հ՝ 16043201908300
ՀՎՀՀ 02585505

-----------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 3
11 10 2021թ. կնքված
ՀՀՈՑ-ԳՀԱՇՁԲ-21/19 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ

______________________

______________________

գտնվելու վայրը ______________
հհ ______________________
հվհհ ______________________

Պատվիրատու

______________________

______________________

գտնվելու վայրը ______________
հհ______________________
հվհհ______________________

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
# ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

______________________________________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _________

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

| N | Կատարված աշխատանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | | |
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց

______________________
ստորագրություն

______________________
ազգանուն, անուն

Կ.Տ.

Աշխատանքը ընդունեց

______________________
ստորագրություն

______________________
ազգանուն, անուն

Կ.Տ.

*Հավելված թիվ 3.1*
*11 10 2021թ. կնքված*
*ՀՀՌՅ-ԳՀԱՇՁԲ-21/19 ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ______________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ________________-ի
Պատվիրատուի անունը　　　　　　　　　　Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. ________________________-ին կնքված N ________________
պայմանագրի կնքման ամսաթիվը　　　　　　　　　　պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. ________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

| Աշխատանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

________________________
ազգանուն, անուն

________________________
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

________________________
ազգանուն, անուն

________________________
ստորագրություն